

ԵՐՈՒԱՆԴ ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՄԵԿ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ

Պ. Ա. Բալմէթ, փասէէօրեան Հաստատութեան գեր-մնօրէնը, Գիտութեանց Ակադեմիային՝ Յունուար 20ի նիստին՝ ներկայացուց երուանդ Մանուէլեանի մէկ նոր ու կարեւոր աշխատութիւնը ժառանգական սիֆիլիսին եւ թրեփոնեմի անբնականոն ձեւերուն վրայ:

Մասնագիտական թերթերէն գատ, փաբրիկ մեծ լրագիրները, Թան, Տեպա, Լրժուրնայ, ևն. յիշատակած են այս աշխատութիւնը իբր ուշագրաւ նորութիւն մը: Ժուրնայ և Տեպա կը գրէ. «Շահեկան նօթ մը Պ. Մանուէլեանի, Պ. Բալմէթի ձեռքով ներկայացուած, պարագայի մը վրայ որ խորշիլ կուտայ թէ հիւժախտային իւլքափիլիսին նման գոյութիւն ունի նաեւ ֆերանկխտային իւլքափիլիս մը, ինչ որ մեծապէս շահեկան է ժառանգական սիֆիլիսի ցարդ անձնօթ մնացած ինչ ինչ ձեւերու ուսումնասիրութեան համար»:

Լրժուրնայ կը գրէ. — «Պ. Բալմէթ շատ շահեկան հաղորդագրութիւն մը կը ներկայացնէ ժառանգական սիֆիլիսի վերայ: Սովորական պարագաներուն մէջ, ախտին ազդալն եղող թրեփոնեմը կը գտնենք սղուն լեարդին կամ գերիկամնային պարուտակներուն (capsules surénales) մէջ: Արդ, երբորդ անգամ ըլլալով Պ. Մանուէլեանի զայն գտած է միմիայն պորտալարին (cordon ombilical) վրայ: Կարելի է ասիլից հետեւնել թէ, ինչպէս հիւժախտային համար, սիֆիլիսը կը ստեղծէ իւլքափիլիս մը որուն անցքին փլասեն:

Ժայկան գտողը (filtre placentaire) չի կըրնար արգելք ըլլալ եւ որ ուղղակի մօրմէն սղուն կ'անցնի»:

Այստեղ կը հրատարակենք, գլխաւոր հատուածները նոյն ինքն Մանուէլեանի խմբագրած հաղորդագրութեան զոր Պ. Բալմէթ կարդացած է Գիտութեանց Ակադեմիայի նիստին.

«... Ըստ երեւոյթին առողջ մայր մը, իր յղութեան միջոցին ո եւ է անհանգըստութիւն (trouble) չգրացած ե ֆրանկխտային ո եւ է նշան ցոյց չառած, կը ծնի դաւակ մը լաւ կազմուած, մորթային եւ լորձնաթաղանթային խոցերէ գերծ, եւ որ աղաբերէն քիչ յետոյ կը մեռնի: Ներքին գործարաններուն քննութիւնը ոչ թրեփոնեմի, ոչ ուրիշ ո եւ է մանրէներու գոյութիւնը կը յայտնէ. քիչ խոցեր որ նկատելի ըլլան»:

«Միայն պորտալարը բռնուած է բուն բորբոքումէ մը՝ պորտալին երակին գծին վրայ, ուր թրեփոնեմները կը վխտան: Արդ, եօք ասիկա սկզբնական արկածը չէ՝ «գըլխատուած սիֆիլիսի մը», արկած որուն գոյութիւնը ենթադրած էին, բայց զոր դեռ երբեք չէին ապացուցած»:

«Ասիկայն ինչ որ մասնաշատուէր ներկայ պարագային մէջ, գոյութիւնն էր սիֆիլիսի միքրոֆիլներու անբնականոն ձեւե-

րու: Հակառակ բազմաթիւ հետախուզութեանց, չէինք յաջողած տիպական թրեփոնեմներ գտնել խոցերուն մակարդակին վերայ: Բնաշըջային ձեւեր կը վիտային հոն սակայն. մեզի եւ իրազեկներուն համար, այդ ձեւերուն առնչութիւնը թրեփոնեմներուն հետ՝ ապահով էր, բայց այդ բնաշըջային ձեւերուն գոյութիւնը միայն՝ անպատրաստ մտքերը պիտի չհամոզէր: «Բլ ինիսիէն»ները պիտի մտածէին՝ ոչ առանց իրաւունքի՝ թէ ի բացակայութեան տիպական թրեփոնեմներու, յանգչութիւն էր ֆրանկախոսային բնոյթ վերագրել խոցերուն, եւ մեր եղբակցութեանց համաձայն պիտի չըլտային: Բարեբաղբաբար, պարտաւարի նոր մասնիկներ ուսումնասիրե-

լով, կարողացանք տիպական մակորոյթներ երեւան հանել, ինչ որ այսօր մեզի թոյլ կուտայ այս գիտողութիւնը հրապարակել:

«Շատ շահեկան պիտի ըլլար այս ուղղութեամբ աշխատութիւններ ընել և միտը սել այն ձեւը զոր կը ներկայացնէ սիֆիլիսի ազդակը (agent) այն խոցերուն մէջ ուր կը պակսի թրեփոնեմի տիպական ձեւերը, որովհետեւ համազուած ենք թէ սիֆիլիսի ազդակը կը ներկայացնէ գալարուկերպ (spiralée) տիպական ձեւէն տարբեր ձեւեր եւս. մեր այս աշխատութիւնը կը ցուցնէ թէ թրեփոնեմներու անբնականոն ձեւերու գոյութիւնը թոյլ կուտայ սիֆիլիսային տխրապարկում մը հաստատել. կամ գէթ զօրեզօրէն ենթադրել:»

ԱՐՈՒԵՍՏԻ՝ ԼՐԱՏՈՒ ՂԱՅԱՍԱՆԻՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻՑ

— Վրաստանի Պետհրատի (Պետական Հրատարակչութեան) Հրատարակութեամբ լոյս տեսու մերոն Թորգոմեանի «Աղայի Փեշքեշը» պատմութեամբ: Թորգոմեան ուղեկից լաւագոյն գրողներից մէկն է. անպա՛ծ է Վրաստանի Գրողների Ֆեդերացիային:

— Միջալէլ Նալբանդեանի ծննդեան հարիւրամեակի առթիւ Թիֆլիսի Հայրաւորներ (Հայ Արուեստի Տունը) կազմակերպեց դրական-գեղարուեստական ճե՛ծ երեկոյթ՝ Ռուսթավէլի թատրոնում, ուր խօսեցին Սուրբաթեանը եւ Արտաշէս Կարինեանը, տալով Մ. Նալբանդեանի գրական-հասարակական գործունէութեան բնորոշում: Իսկ «Վրական Շարաթ»-ի 42—43 թիւը ամբողջութեամբ նուիրեց Մ. Նալբանդեանին. այնտեղ յղումներ ունէին Կարինեան, Սուրբաթեան, Յակոբ Յակոբեանի, Ջարեան, Վարդանեան եւ ուրիշներ:

— Թիֆլիսի Հայրաւորներ տունում է բանաստեղծ Վահան Ճերեանի մահուան տասնամեակը:

— Երեւանում Պետհրատի Հրատարակչութեամբ լոյս տեսաւ Նար-Դոսի «Սպանած Աղաւնիկ» վէպը՝ Հիմնովին վերածրակուած եւ ընդարձակուած:

— Վրաստանի Պետհրատը հրատարակում է Սայեաթ-Նովայի գործերը՝ հայերէն, վրացերէն եւ թուրքերէն լեզուներով:

— Հայ Պետկինոն (պետական սինէման) Մ. Դարբինեանի «Կիկոս» վէպը զարձնում է կինոֆիլմի:

— Թիֆլիսի Հայրաւորան կից կազմակերպուած է «Հայ գրականագէտների եւ արուեստագէտների անկիւն», ուր հաւաքում են տաղանդաւոր գրականագէտների եւ արուեստի զանազան ճիւղերի վերաբերակ նիթեր, — ինքնակենսագրութիւններ, նամակներ, լուսանկարներ, քննադատական յօդածներ, գրքեր, նոթաներ, եւն.: Թանգարանը կազմա-